ՅՈՎՆ.-ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Մուրճ»ի յունուարի տետրում հաղորդուած էր այդ դպրոցի հոգաբարձութիւնը ընտրելու համար կատարուած ծխական պատգամաւորների ընտրութիւնների մասին։ Ինչպէս յիշում կը լինեն մեր ընթերցողները՝ կասկածելի միում էին Բեթղեհէմի ս. Աստուածածնայ ընտրութիւնները, որոնց արդիւնքը հաղորդելով հանդերձ մենք մատնանիշ էինք եղել այն հանգամանքի վրայ՝ որ այդ եկեղեցում ընտրողների թիւը ծխականների մի հինգերորդից ($^1/_5$) պակաս էր եղած, հետեւապէս պէտք էր կարծել թէ այդ եկեղեցու ընտրութիւնը կը բեկանուէր պատշաճաւոր իշխանութեան կողմից։ Զեկուցուած էր ուր հարկն է անվաւերականութեան մասին եւ այդ պատճառով յիշեալ եկեղեցու ծխականները յաջորդ կիրակի նորից հրաւիրեցին ընտրութիւններ կատարելու, որ սակայն տեղի չունեցան այն պատճառով որ նոյն եկեղեցու քահանաները ինքնիշխան կերպով փակեցին եկեղեցու դռները եւ չկատարեցին ընտրութիւնները։ Այդ անցքից յետոյ Գէորգ եպ. Սուրէնեանց հաստատեց Թեմիս առաջնորդ, որը այլ եւ այլ հիմունքներով առաջին ընտրութիւնները վաւերական ճանաչեց։

Մարտի 24-ին կատարուեցին նոյն դպրոցի հոգաբարձական ընտրութիւնները մասնակցութեամբ բոլոր տասներկու պատգամաւորների եւ նախագահութեամբ Թեմական առաջնորդի։ Նիստում այլ խօսակցութիւններ տեղի չունեցան, բացի այն որ պատգամաւորներից մէկը հարց ուղղեց սրբազան նախագահին թէ այդ ինչ է նշանակում որ ընտրութիւնների մասին միայն երկու օր առաջ է ծանուցել, քանի որ պատգամաւորների ընտրութեան օրից մինչ հոգաբարձական ընտրութեան օրը երկու ամիս է անցած. իսկ այդ ժամանակամիջոցում պատգամաւորներից ոմանք կարող էին բացակայ լինել քաղաքից. իբր օրինակ բերեց իրան, որը իւր պատգամաւորական պարտականութիւնը կատարելու համար, հեռագիր ստանալուն պէս, Երեւանից ճանապարհ է ընկել եւ հազիւ նիստից մի ժամ առաջ Թիֆլիս է հասել։ Այդ հարցին սրբ. առաջնորդ-նախագահը բաւականացաւ պատասխանելով թէ իւր կարգադրութեան հիմքում վատ դիտա-

տրութիւն չի եղել, այլ միայն ուզեցել է որ այդ օրը կատարեն ընտրութիւնները, ուրիշ ոչինչ։

Գալով բուն ընտրութիւններին, պատգամաւորները իրանց հակումներով բաժանւած էին երկու մասի։ Մի մասը ցանկանում էր ընտրել հոգաբարձուներ յատկապէս դպրոցի հիմնադիր հանգուցեալ Յովհաննէսի տոհմից կամ ազգականներից, իսկ միւս մասը ցանկանում էր որ ընտրւելի չորս հոգաբարձուներից երկուսը և կամ գոնէ մէկը ընտրւի միանգամայն անկախ ազգակցական կապերից։

Մեր ընթերցողներին հարկ ենք համարում հաղորդել, որ նիստից մի օր առաջ Յովհաննեան դպրոցում կայացած պատգամաւորների մասնաւոր մի ժողովում մենք ծանօթացանք Գէորգ IV կաթողիկոսի կոնդակի, որպէս նաև Բարձրագոյն հաստատւած կանոնադրութեան և հանգուցեալի կտակի և այլ պաշտօնական գրութիւնների հետ և հաւաստիացանք որ այդ բոլոր պաշտօնական վկայութիւններում մի տող անգամ չկայ, որով պարտաւորութիւն դրւած լինի պատգամաւորների վրայ հոգաբարձու ընտրել անպատճառ Յովհաննեան տոհմից կամ ազգականներից։

Միակ իրաւունքը, որ կարելի է տոհմի իրաւունք ճանաչել, այդ հետևեալն է. կտակի զօրութեամբ դպրոցին յատկացրած քարւանսարայի եկամտից պէտք է գոյացնւի 24000 ռուբլու մի ֆոնդ, որի տոկոսներով 10 որդեգրուհիներ պիտի պահեն վիշեալ դպրոցում. արդ, ընտրութիւնը այդ որդեգրուհիների վերապահւած է Յովհաննեան տոհմի մէջ աւագին և ոչ դպրոցի հոգաբարձութեանը։ Եւ նոյն իսկ այդ տոհմական իրաւունքն էլ բաւականաչափ որոշւած չէ. մի տեղ այդ իրաւունքը յատկացրած է старшему въ его родѣ (նորա տոհմի աւագին), միւս տեղ ասւած է старшему въ родѣ (տոհմի աւագին), որով հասկացւում է թէ այդ իրաւունքը տրւում է նորա, այսինքն Ստեփանոս Անանեանցի՝ սերնդի մէջ աւագին, իսկ միւսով կարելի է հասկանալ նաև որ այդ իրաւունքը տրւում է առհասարակ Անանեան (Յովհաննեան) տոհմի մէջ ամենահասակաւորին։ Դրւած այսպիսի անորոշ գրութեան մէջ՝ մինչ այժմեան խնամակալները և հոգաբարձութիւնները այդ իրաւունքը ճանաչել են հանգուցեալ Ստեփ. Անանեանցի մեծ որդու օգտին, իսկ հանգուցեալ հիմնադրի արական սերնդի իսպառ ջնջւելուց յետոյ՝ հանգուցեալ հիմնադրի եղբայր պ. Ալեքսանդր Անանեանցի օգտին։

Բայց, կրկնում ենք, հոգաբարձական թեկնածուների խնդիրը ոչ մի բառով չի կապւած Անանեան տոհմի իրաւունքների հետ։

Չնայած զորան՝ նոքա, որոնք նոր տարր էին ուզում մտցնել հոգաբարձուների կազմի մէջ, և նոցա թւում նաև ամսագրիս խմբագիրը, միանգամայն արդարացի և խելացի էին գտնում ընտրել հոգաբարձու առնւազն երկուսին և նոյն իսկ երեքին Անանեանների մերձաւորներից,

բայց ոչ որովհետև անուանով մերձաւոր են հանգուցեալ հիմնադրին, այլ որովհետև դոցանից երեքը՝ Աղեքսանդր Ստեփանեան Անանեանց, Յովհաննէս Ստեփանեան Խատիսեան և բժ. Միքայէլ Շահպարոնեան գլխաւոր գործօններից են եղել հանգուցեալ հիմնադրին դէպի այդ բարեգործութիւնը մղելու և ամեն վտանգից դպրոցը մինչ այժմ զերծ պահելու և համեմատապէս բարեկարգ դրութեան մէջ պահպանելու համար։

Այդ հիման վրայ՝ Նոր տարր մտցնելու կուսակիցները իրանց պահանջը իջեցրին երկուսից մինչ մէկը, առաջարկելով այսպիսի ցուցակ. Աղ. Անանեան, Յովհ. Խատիսեան, Միք. Շահպարոնեան, իսկ չորրորդը՝ պ. Յովհ. Սպենդիարեան։ Հակառակորդները պնդեցին տոհմականների անուններին վրայ։ Գաղտնի ընտրութեան հետևանքը եղաւ հետևեալը.

1. *Աղեքսանդր Անանեան* 12 *ձայն (միաձայն)*
2. *Յովհաննէս Խատիսեան* 11 *ձայն (միաձայն, ինքը իբր պատգամաւոր՝ ձեռնպահ իւր համար)։*
3. *Միքայէլ Շահպարոնեան* 12 *ձայն (միաձայն)։*
4. *Բժ. Ստեփանոս Անանեան* 7 *քուէ ընտրողական և* 5 *սև։*
5. *Յովհաննէս Սպենդիարեան* 6 *քուէ ընտրողական և* 6 *ոչ ընտրողական։*

Այսպիսով ընտրուեցին առաջին չորսը։

Մասնակցեցին ընտրութեան՝

Վանքի մայր եկեղեցուց—պպ. Յովհ. Խատիսեան, Գաբր. Սունդուկեանց, Աբր. Բաբանեան և Իսահակ Բուղդանեան։

Մողնու ս. Գէորգ եկեղեցուց—պպ. Աւ. Արասխանեանց, Յակոբ Թաղէոսեանց, Ստ. Լիսիցեան և բժ. Լոռու-Մելիքեան։

Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցուց—պպ. Կոնստ. Ալիխանեանց, Նիկ. Խօսրովեան, բժ. Կուկուջանեան և Յ. Խուդադեան։

Ա. Ա.